ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ-3102, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱԽՈՍ՝ 0312 50622

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3102, TEL: (0132 50622)
EMAIL: INFO@ASPAREZ.AM WWW.ASPAREZ.AM

## Հանրային կարծիքի զանգվածային հարցում

# ԳՅՈՒՄՐՈՒ ՏԻՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

- Հարցումն իրականացրել է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը սեփական նախաձեռնությամբ,
- Գյումրի, 19-23 հոկտեմբերի, 2008, նամակային հարցում բնակարաններում,
- Ընտրույթը՝ բնակչության տեղաբաշխման խտության համամասնությամբ, պատահական, Գյումրին բաժանվել է 78 հատվածների, որոնցում հարցվողների թիվը կազմել է 4-16՝ ըստ բնակչության տեղաբաշխման խտության, այդպիսով հարցումն արտացոլում է ամբողջ Գյումրու հավաքական տրամադրությունը,
- Նամակներն ու հարցաթերթիկները հարցվողներին են տարածել Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կամավորները: Նրանք կուսակցականներ չեն եւ չեն եղել նախկինում, չեն աշխատել երբեք որեւէ ԶԼՄ-ում, պետական կամ տեղական իշխանությունների մարմիններում, թեկնածուական հավակնություններ չունեն առաջիկա ՏԻՄ ընտրություններում:
- Վերադարձել է **388** նամակ:
- Հարցաթերթը պարունակել է 2 հարց. նախընտրելի ավագանու անդամության եւ քաղաքապետի նախընտրելի թեկնածուները.

## Հարցումների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ պահանջված տեղեկությունների հրապարակումը

Հարցումն անցկացրած կազմակերպության անվանումը. Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ,

Հարցման ժամկետները. 19-23 հոկտեմբերի, 2008

Հարցվածների թիվը՝ 388 հոգի 1000 հնրավորից,

Ընտրանքի ձեւը, հավաքման ձեւը եւ վայրը. պատահական ընտրույթ բնակարաններում՝ ըստ Գյումրու բնակչության տեղաբաշխման խտության համամասնության: 78 քաղաքային հատված, որ ծածկում են ամբողջ քաղաքը, քայլը՝ յուրաքանչյուր 3-րդ բնակարանը: Հարցվողներին բաժանվել է նամականշված մեկական ծրար եւ մեկական հարցաթերթիկ: Ծրարաների վրա երկու հասցեմերն էլ լրացված են եղել: Ուղարկողի հասցեն գրված է եղել Ակումբի խորհրդի նախագահի անձնական հասցեն, իսկ վերջնական հասցեն՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի հասցեն: Հարցվողներից խնդրվել է ծանոթանալ հարցաթերթիկին, երկու նշում կատարել թեկնածուների շարքերում, հարցաթերթիկը քառածալ դնել ծրարում փակել ծրարը, եւ առանց որեւէ նշման նամակը հանձնել որեւէ փոստատուն:

Հարցաթերթիկը ներկայացված է կից,

Հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը՝ 4-5 տոկոս:

Պատվիրատու՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ խորհրդի նախագահ Լ.Բարսեղյան,

Հարցման արդյունքները հրապարակելու ֆինանսավորման աղբյուրը. Հարցման եւ ամփոփման աշխատանքներն արվել են կամավորական ծառայություններով, հարցաթերթերի պատճենման եւ տրանսպորտային ծախսերի իրականացման համար իր անձնական միջոցներն է ներդրել հարցման պատասխանատուն:

Հարցաթերթիկի նմուշը

# Հարգելի քաղաքացի,

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը իրականացնում է հանրային կարծիքի հետազոտություն կայանալիք առաջիկա նախագահական ընտրությունների նախաշեմին: Այս անգամ մենք ընտրել ենք մի մեթոդ, որը թույլ է տալիս հարցվողներին հնարավորինս անկախ լինել իրենց կարծիքը հայտնելիս: Խնդրում ենք.

1. **1 օրվա ընթացքում լատինատառ՝ V նշում կատարել Ձեր նախընտրած ավագանու անդամության եւ քաղաքապետի թեկնածուի անվան դիմաց:**
2. **Հարցաթերթիկը քառածալ դնել ծրարի մեջ, փակել ծրարը,**
3. **Նամակը հանձնել մոտակա կամ Ձեր կամեցած մեկ այլ փոստատուն մինչեւ հոկտեմբերի 21-ը՝ ներառյալ:**

Ուշադրություն,

- **Ավագանու անդամության թեկնածուների ցուցակում նշեք միայն մեկ թեկնածուի անվան դիմաց**, այլ նշում մի՛ արեք, մի՛ ստորագրեք, անուն-ազգանուն մի՛ գրեք, միայն նշեք՝ Ձեր հավանած թեկնածուի անվան դիմաց՝ V
- **Քաղաքապետի անդամության թեկնածուների ցուցակում նշեք միայն մեկ թեկնածուի անվան դիմաց**, այլ նշում մի՛ արեք, մի՛ ստորագրեք, անուն-ազգանուն մի՛ գրեք, միայն նշեք՝ Ձեր հավանած թեկնածուի անվան դիմաց՝ V
- Ուրիշ ոչինչ հարկավոր չէ, փոստատանը **վճարելու կարիք չկա**, ծրարի վրայի նամականիշը նշանակում է, որ նամակը մեզ հասցնելու համար արդեն վճարված է:
- Կատարեք Ձեր ընտրությունը այնպես, ինչպես կքվեարկեիք, եթե այսօր լիներ ընտրության օրը: Խնդրում ենք՝ չուշացնել:
- Չանհանգստանաք. Ձեր անձը անհնարին է բացահայտել, այսպիսի 1000 ծրար է բաժանվել Գյումրիում: Ծրարի վրա նշված հասցեները «Ասպարեզ» ակումբի հասցեներն են:

| Քաղաքապետի թեկնածուներ | Որեւէ մեկի օգտին նշումը կատարեք այստեղ |
|---|---|
| Մարտուն Կամոյի Գրիգորյան | |
| Դանիել Սամվելի Դարբինյան | |
| Վարդան Կոլյայի Ղուկասյան | |

Ավագանու անդամության թեկնածուների ցուցակը հակառակ էջին է

Ավագանու անդամության թեկնածուներ, նշումը, խնդրում ենք կատարել թեկնածուներից մեկի  անվան դիմաց վանդակում:
Խնդրում ենք համբերությամբ ծանոթանալ բոլոր թեկնածուների անուն ազգանուններին, ապա միայն նշում կատարել:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ադամյան Գագիկ Մերուժանի | | 27 | Համբարձումյան Թորգոմ Սամվելի | |
| 2 | Ալեքյան Գեւորգ Սիմոնի | | 28 | Հարթենյան Սամվել Ռոստոմի | |
| 3 | Աղանյան Գրիգոր Թորգոմի | | 29 | Հարությունյան Ղարիբ Հովհաննեսի | |
| 4 | Անդրիասյան Ռոբերտ Մկրտիչի | | 30 | Ձվակերյան Դրաստամատ Նիկոլայի | |
| 5 | Առաքելյան Գեւորգ Սերյոժայի | | 31 | Ղազարյան Գեորգի Նիկոլայի | |
| 6 | Ավետիսյան Էդգար Հունանի | | 32 | Ղարիբյան Գագիկ Հարությունի | |
| 7 | Բադեյան Արմեն Լյովիկի | | 33 | Ղափլանյան Արփիկ Գրիգորի | |
| 8 | Բաղրամյան Արամայիս Վարդանի | | 34 | Մարտիրոսյան Ոսկան Սերյոժայի | |
| 9 | Բերնեցյան Վահան Հարությունի | | 35 | Մարտիրոսյան Սամվել Մարտունի | |
| 10 | Գրիգորյան Գրիգոր Գառնիկի | | 36 | Մելքոնյան Հրաչ Լեւոնի | |
| 11 | Գրիգորյան Սերգեյ Սարգսի | | 37 | Մելքոնյան Վարդան Սենեքերիմի | |
| 12 | Եդիգարյան Վարդան Աշոտի | | 38 | Միքայելյան Թորոս Մերուժանի | |
| 13 | Զարգարյան Չուբար Պատվականի | | 39 | Մխիթարյան Հարություն Մելքոնի | |
| 14 | Զաքարյան Հովիկ Ռոբերտի | | 40 | Մնացականյան Միքայել Էդմոնի | |
| 15 | Թորոսյան Անդրանիկ Ռուբենի | | 41 | Մովսիսյան Ռուբիկ Խորենի | |
| 16 | Թումասյան Վահան Լյովայի | | 42 | Նիկողոսյան Գագիկ Իգիթի | |
| 17 | Խաչատրյան Անդրանիկ Հրաչիկի | | 43 | Պետրոսյան Տիգրան Ռոբերտի | |
| 18 | Խաչատրյան Արամ Հրաչի | | 44 | Պողոսյան Հենրիկ Սեդրակի | |
| 19 | Խաչատրյան Արամ Նիկոլայի | | 45 | Սադոյան Արամայիս Հենրիկի | |
| 20 | Խաչատրյան Գագիկ Խաչատուրի | | 46 | Սահակյան Գայանե Ռաֆիկի | |
| 21 | Խաչատրյան Հրայր Խաչիկի | | 47 | Սահակյան Մխիթար Գուրգենի | |
| 22 | Կարապետյան Անդրանիկ Ռաֆիկի | | 48 | Սարուխանյան Կարեն Հակոբի | |
| 23 | Կարապետյան Հրայր Ռուդոլֆի | | 49 | Սարուխանյան Համլետ Ռաֆիկի | |
| 24 | Կարապետյան Մուրադ Համբարձումի | | 50 | Ստեփանյան Կարեն Ժորայի | |
| 25 | Կժդրյան Հովհաննես Հակոբի | | 51 | Սուքիասյան Գագիկ Պավելի | |
| 26 | Կիրակոսյան Վլադիմիր Համլետի | | 52 | Փանոսյան Տիգրան Բյուզանդի | |

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

Հարցաթերթիկի նմուշի ավարտը

Հարցման արդյունքները, Ավագանու թեկնածուների վարկանիշերը



Հարցման արդյունքները, Քաղաքապետի թեկնածուների վարկանիշերը




Հանրային կարծիքի նամակային հարցում, 19-23 հոկտեմբերի, Գյումրեցիներին բաժանվել է 1000 նամականշված ծրար եւ 1000 հարցաթերթիկ, երկու հարցով. նախընտրելի քաղաքապետի թեկնածուն եւ նախընտրելի ավագանու թեկնածուն: Հոկտեմբերի 24-ի ժամը 16:00-ի դրությամբ ետ է վերադարձել 388 ծրար: Արդյունքները ստորեւ: 4 թերթիկ վերադարձել է առանց նշման կամ բոլորին դեմ: